«ԱԳՐՈՏԵԽ» ՍՊԸ մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի
09.01.2026 թվականի N 2 որոշման N 1 հավելված

«ԱԳՐՈՏԵԽ» ՍՊԸ

ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն կանոնակարգը մշակված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի,Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքի և «ԱԳՐՈՏԵԽ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջներին համապատասխան:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Խորհուրդը ընկերության կառավարման մարմինն է, որը գործում է Կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:

Խորհուրդը իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Խորհուրդն իր գործունեությունն իրականացնելիս ելնում է Ընկերության շահերից և ղեկավարվում ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումներով և ներքին իրավական այլ ակտերով:

2. ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդի անդամները ընտրվում են և խորհրդի անդամների լիազորությունները դադարեցվում են, այդ թվում՝ վաղաժամկետ, Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

Խորհրդի անդամը պետք է համապատասխանի ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024 թվականի N 1955-Ն հրամանով հաստատված ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին:

Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների միաձայն համաձայնությամբ:

3. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդի անդամները իրավունք ունեն ծանոթանալ Ընկերության հիմնադիր և նորմատիվ փաստաթղթերին, հաշվետվություններին, պայմանագրերին և այլ նյութերին:

Խորհուրդը պատասխանատվություն է կրում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումների կատարման համար՝ իր իրավասությունների մասով:

Խորհրդի անդամները խորհրդի անդամ լինելու ժամանակահատվածում, ինչպես նաև լիազորությունները դադարեցնելուց հետո 2 (երկու) տարվա ընթացքում պարտավոր են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին տեղեկացնել Ընկերության հետ մրցակցող իրավաբանական անձանց հիմնադրման կամ դրանցում մասնակցության իրենց մտադրությունների մասին:

Խորհրդի անդամները պատասխանատու են իրենց իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ ընդունված որոշումների հետևանքների, իրենց գործողությունների (անգործության) պատճառով Ընկերությանը պատճառված վնասների համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամի, վերստուգողի, տնօրենի, ընկերության աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև քվեարկող բաժնեմասի 10 և ավել տոկոսին տիրապետող մասնակցի պահանջով:

Խորհրդի նիստ գումարելու ծանուցումը խորհրդի անդամներին ուղարկվում է նիստի հրավիրման օրվանից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել ինչպես անդամների ֆիզիկական ներկայությամբ, այնպես հեռավար եղանակով:

Խորհրդի նիստը նախագահում է նախագահը: Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե նիստին մասնակցում են խորհրդի առնվազն 2 (երկու) անդամ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի կամ քվեարկության իրավունքի փոխանցում չի թույլատրվում: Խորհրդի նիստերը արձանագրվում են խորհդի նախագահի կամ վերջինիս կողմից ընտրված խորհրդի նիստերի քարտուղարի կողմից:

5. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Խորհրդի նիստերի արձանագրությունները պետք է ծանոթության համար հասանելի լինեն Ընկերության մասնակիցներին, վերստուգողին և տնօրենին:

Խորհրդի գործունեության արդյունքում ձևավորվում է խորհրդի թղթապանակ, որն իր մեջ ներառում է՝ նիստերի արձանագրությունները, խորհրդի պաշտոնական գրագրությունը, խորհրդի որոշումների կատարման ընթացքին առնչվող փաստաթղթեր և այլն: Խորհրդի թղթապանակում ներառված փաստաթղթերը ենթակա են արխիվացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Թղթապանակը կարող է պահպանվել նաև էլեկտրոնային եղանակով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնակարգը հաստատված է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Կանոնակարգում փոփոխություններ անելու իրավասությունը նույնպես վերապահված է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին:

Եթե ՀՀ օրենսդրության փոփոխության արդյունքում, կանոնակարգի առանձին դրույթներ հակասության մեջ մտնեն գործող օրենսդրության հետ, ապա վերջիններս կհամարվեն ուժը կորցրած և խորհրդի անդամները կղեկավարվեն ՀՀ գործող օրենսդրությամբ մինչև կանոնակարգում համապատասխան փոփոխությունների կատարումը: